Սմբատ Բիւրատ
Խմբագրութիւն «Փիւնիկ»ի
Աղեքսանդրիա

S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Ղրշ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է

# ՓԻՒՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բալ. 6

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ — 14 ՕԳՈՍՏՈՍ 1901 — ԹԻՒ 11

## ՁԵԿՈՒՅՈՒՄ

«Փիւնիկ»ի Թիւ 10ի Յաւելուածը «Սահմանադրութիւնը Աղեքսանդրիոյ մէջ» վերնագրով, բարերար տրպաւորութիւն մը թողուց ընթերցող հասարակութեան վրայ, վաւերական պաշտօնագրին հրատարակութեամբը, որ ջախջախիչ հարուածով մը «Սահմանադրութեան պաշտպանները» խախուտ դղեակը տապալեց ու Աղեքսանդրեցիք անդամ մ'ալ յիշեցին հերուան Սեպտեմբերին «ճշմարտութիւնը Աղեքսանդրիոյ Ազգ. գործերուն վրայ» տիտղոսով յաջորդաբար երևցող Նոր-Օրի անողոքելի Յաւելուածները։

Այս առթիւ կը յայտարարենք թէ հետզհետէ խմբագրութեանս հասնող շահեկան նիւթերու առատութիւնը կը մղէ մեզ այսօր իսկ հանելու 11 րդ թիւը, խոստանալով այսուհետև, կրկնապատիկ ծաւալով հրատարակելու «Փիւնիկ»ը, ցորչափ ներեն մեր նիւթական միջոցներն ու եթէ, մանաւանդ, քաջալերուին ք մեր Պատ. բաժանորդներէն։

Տիար Խմբագիր «Փիւնիկ»ը

Ներփակեալ դրութիւնս ուղղած էի «Արշալոյս»ի մէջ հրատարակել սա միակ պատճառաւ որ անոր տեղի տուող յօդուածը այդ թերթին մէջ երևցած էր։

Արշալոյսի տնօրէնը անցեալ կիրակի օրը (Օգոստոս 11) դրաւոր կերպով յանձնառու եղաւ հետևեալ օրը երկուշաբթի մասնաւոր յաւելուածով մը հրատարակելու և ատոր համար ըլլալիք ծախուց մէկ մասն ալ կանխիկ դրպանեց. սակայն հակառակ այդ պայմանաց, ոչ միայն չի հրատարակեց, հապա նոյն իսկ այսօրուան կրկնակի հեռագիրներով իրեն եղած հարցմանց ալ խուսափողական պատասխաններ տալով ժամանակ շահելու ջանաց և միայն այս պահուս (դիշերուան ժամը 10) ձեռքս հասած մի նամակաւը կը յայտարարէ թէ՝ երկուշաբթի առաւօտ տեսած ըլլալով որ միևնոյն խնդրոյն վերաբերեալ յօդուած մը հրատարակուած

է արդէն Փիւնիկի շաբաթ օրուան յաւելուածովը, չի կրնար ուրեմն նոյն խնդրոյն մասին դրութիւն մ'ալ ինքը հրատարակել և միանգամայն կը մոռնայ ինձ վերադարձնել ձեռագիրս և կանխավճարս, որոնք յօդուածս կարդալէն և զայն երկուշաբթի օրը մասնաւոր յաւելուածով հրատարակելու համար տուած դրաւոր յանձնառութենէն յետոյ միայն իրեն յանձնուած էին։

Արշալոյսի այս անվայել վարմունքը երկու բան կ'ապացուցանէ, նախ իւր խմբագիր—տնօրէնին ինչ արժանիքի տէր ըլլալը և երկրորդ, որ աւելի կարևորն է, այն է թէ «Արշալոյս» Աղէքսանդրիոյ առժամեայ թաղ. խորհրդոյ պաշտօնական թերթը ըլլալու փառքէն ի վեր, այլևս բնաւ ոչ ազգային շահ կը ճանչնայ և ոչ ալ ժողովրդային իրաւունք, ինքը այսուհետև յատկացուած ըլլալով մի միայն յիշեալ թաղ. խորհրդոյ պաշտօնական զեկուցումները և անոր գրագրին կողմանէ ժողովուրդին դէմ տեղացող նախատինքները և անարգանքները հրապարակ նետելու, ինչ որ ոչ ըլլան այդ դրութիւնները իրենց լրջութեան և ճշմարտութեան տեսակովը։

Ուրեմն ժողովուրդին դնահատման թողլով Արշալոյսի պէս թերթի մը հանդէպ իւր բռնելիք ընթացքին որոշումը, կուգամ խնդրել Փիւնիկի խմբագրութենէն որ վերոյիշեալ դրութիւնս ամենայն փութով հրապարակ հանէ կանխելով Փիւնիկի յառաջիկայ թուոյն հրատարակումը, որպէս զի օր մը առաջ ժողովուրդը կարենայ ճշմարտութեան տեղեկանալ։

Ընդունեցէք . . .

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

13 Օգոստոս 1901 (դիշեր ժամ 11)

Աղէքսանդրիա

Յօժարակամ կը փութանք հրատարակել հետևեալ յօդուածը, զոր սոյն նամակաւ ղրկած է խմբագրութեանս, իր ուղղամտութեամբն ու խաղաղասէր նկարագրովը ծանօթ, քաղաքիս պատուաւոր վաճառականներէն Տիար Միհրան Գալֆաեան, որ, ինչպէս գիտեն մեր եգիպտահայ ընթերցողները, իր անձնական փորձառութեամբը մեծ հեղինակութիւն ունի ազգային վարչական գործերուն քննադատութեանց մէջ։

Սոյն շահեկան ու դերազանցապէս լուսաբանող գրութիւնը կը հրատարակենք նախ՝ պարտականութեան համար, որուած ըլլալով պարտնակութիւնը որ ծայրէ ծայր ազգային օրէնքին ու ժողովրդային իրաւանց պաշտպանողական մ'է. երկրորդ՝ ճշմարտութեան համար, որուն ձայնին արձագանգ կը հանդիսանայ մեծայարգ յօդուածագիրը, թարգմանելով, յանիրաւի նախատուած ժողովուրդի մ'արդար զայրոյթը այն ժողովրդին, որ Սահմանադրութեան հո՛ս ալ գործադրութիւնը կը պահանջէ օրինաւոր և խաղաղասիրական դիմումներով. երրորդ՝ արդարութեան համար, որուն անաչառ մուրճով զինուած՝ մեր Պատ. յօդուածագիրն կուգայ ջախջախել սուտերը ու կեղծիք ծամծմող ծնօտը Պ. Գրագրին, որ տխուր հոգի ունեցաւ «Արշալոյսի» 201 թիւով հրապարակ նետելու ծանօթ անկապ, կցկտուր ու ապուշ դրութիւնը.

Կը խնդրուի միայն «Փիւնիկ»ի Պատ. ընթերցողներէն որ ամէն կողմակալ ոգի ու կիրք մէկդի ձգած, լարուած ուշադրութեամբ մը հետևին ներկայ յօդուածին, որ ճշմարիտ յայտնութիւն մ'է։

## ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶԸ՛ ԽԱԲՈՒԻՐ

«Արշալոյս»ի 201 թիւին մէջ «Սահմանադրութեան պաշտպանները» վերնագրով յօդուած մը կարդացինք որուն առթիւ կը փութանք մի քանի դիտողութիւններ ընել, առանց յօդուածագրին ուղղակի պատասխանել ջանալու։

Նպատակնիս բնաւ Աղէքսանդրիոյ

ներկայ Թաղ. Խորհրդոյ գոյութեան թեր կամ դէմ խօսիլ չէ, ոչ ալ անոր արարքը քննել կամ քննադատել, այլ պարզապէս հաստատել սա անուրանալի ճշմարտութիւնը թէ՝ Աղեքսանդրիոյ ներկայ Թաղ. Խորհուրդը ժողովրդային օրինաւոր ընտրութիւնով կազմուած Թաղ. Խորհուրդ մը չէ, այլ պարզապէս առժամեայ վարչութիւն մը կամ հոգաբարձութիւն մը որոյ պէտքը ժամանակին տեսնուած էր պարագայից բերմամբ։

Սահմանադրական օրինաց համաձայն կատարուած Թաղ. Խորհրդոյ ընտրութիւն մը վաւերական ըլլալու համար, անհրաժեշտ պէտք է որ ընտրողական ժողովը իւր կողմանէ պատրաստուած և ստորագրուած տեղեկագրով մը հաստատէ ընտրութեանց անիսարդսիս կերպով եւ օրինաւորապէս կատարուած ըլլալը։ Արդ ուղղակի եւ մի միայն Վսեմ. Պողոս բաշայի կը դիմենք հարցուցանելու համար թէ կրնա՞յ կամ պիտի ուզէ՞ երբէք յանուն իւր պատուոյն յայտարարել թէ 1899 Ապրիլի ընտրութիւններուն առթիւ այն ատենուան ընտրողական ժողովը չարգիլուեցաւ իւր տեղեկագիրը պատրաստելէ, այն ատենուան Առաջնորդական Տեղապահ Յակոբ Աշոտ Եպիսկոպոսի կողմէն որնոր Տեղեկագրի պատրաստութեան եւ ստորագրութեան համար ընտրողական ժողով գումարուելու հրաւիրագիրը ղրկեց և այդ հրաւիրագիր ստացած ըլլալնուն համար անդամներէն ստորագրութիւն առնելէ վերջը, երբ իմացաւ որ ընտրութեանց ատեն գործուած զեղծմանց և ապօրէն միջոցներու դէմ բողոքներ պիտի ըլլան ընտրողական ժողովոյ մէջ, անմիջապէս վերոյիշեալ ստորագրութիւնները իրենց տէրերուն վերադարձուց ըսելով ծառային միջոցաւ թէ ժողով չըպիտի գումարուի այդ օրը և մի և նոյն ժամանակ փութաց ընտրութիւնները ինքնիրեն վաւերացեալ հռչակել։

Երկրորդ. Իրաւ է որ Սահմանադրութիւնը՝ օրինաւորապէս ընտրուած Թաղ. Խորհրդոյ մը չարգիլեր որ իւր պակսած մէկ կամ երկու անդամոց տեղ ժողովուրդին մէջէն իւր ուզած անձինքը իրեն օժանդակ առնելով պակսածներուն թիւը լրացնէ և այն ալ Պօլսոյ մէջ՝ Պատրիարքարանի եւ գաւառաց մէջ՝ Ազգային բարձրագոյն իշխանութեան գիտութեամբ և հաւանութեամբը։ բայց երբ նոյն իսկ օրինաւորապէս ընտրուած Թաղ. Խորհուրդ մը ամբողջովին կը հրաժարի և ինքզինքը շուծեալ կը համարէ, այնուհետեւ հրաժարող ամբողջութեան մէկ մասը չի կրնար գաղտնապէս իւր հրաժարականը ետ առնելով մնացեալ մասին տեղն ալ ուրիշներ ընտրելով ինքզինքը դարձեալ օրինաւորապէս «վերակազմեալ» հռչակել։ Այդ «վերակազմեալ» անունը յեղափոխական դիմակին տակ դործող 2 – 3 տխուր անձնաւորութիւններու և մէկ մ'ալ յանուն աղքատաց՝ իրենց կուսակցամոլ կիրքերուն յագուրդ տուող մի քանի ողորմելի արարածներու վրայ միայն կրնայ տեսնուիլ։ բայց Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդը՝ այդ տեսակ վերակազմութիւն մը չէր։ կարող ընել և չէ ալ ըրած, այլ պարզապէս իւր ամբողջութեամբը հրաժարած և շուծուած է և այս ալ հաստատելու համար դարձեալ կը դիմենք նոյն ինքն Վսեմ. Պողոս Բաշայի, հարցնելու համար թէ՝ կարելի՞ է որ յանուն իւր պատուոյն յայտարարէ թէ՝ 1899 Ապրիլի Թաղ. Խորհրդոյ երկու անդամոց հրաժարելուն վրայ, ինքը չի յայտնեց յատենի ժողովոյ թէ՝ քանի որ կարևոր անդամները հրաժարած են, ուրեմն խորհուրդը շուծեալ է և թէ այս յայտարարութեան վրայ, «անկարևոր» նկատուած անդամներն ալ հրաժարելով Խորհուրդը ամբողջովին հրաժարեալ չարձանագրուեցաւ։

Երրորդ. Թաղ. Խորհրդոյ այսպէս ամբողջովին հրաժարման վրայ, բնական էր որ Ազգային և Եկեղեցա-

կանոնիպողակ՝ն դործերը երեսի վրայ կարելի չէր թողուլ և որովհետև նոյն միջոցին ո՛չ Առաջնորդ կար և ո՛չ ալ Առաջնորդական Տեղապահ, որ Ազգային իշխանութիւնը ներկայացնելով պարտ ու պատշաճը տնօրինէր. և միւս կողմանէ ալ դժբաղդաբար, Ազգային դաւառական վարչութիւն մը չի կար Եդիպտոսի մէջ, կամ դոնուածն ալ ըստ ընկալեալ սովորութեան մը, Աղէքսանդրիոյ իրարու յաջորդող Թաղ. Խորհուրդներու համար գոյութիւն չէ ունեցած, կամ ինքը չէր ուզած իւր գոյութիւնը զգալի ընել Աղէքսանդրիոյ մէջ, ուստի Վսեմ. Պօղոս Բաշա ինքն ստանձնելով այդ պաշտօնը իբրև մշտակայ պատուակալ Առաջին Ատենապետ, յօժարեցաւ անմիջապէս հինգ հոգիէ բաղկացեալ առժամեայ Թաղ. Խորհուրդ մը կազմել, որպէս զի մինչեւ որ օրինական միջոցներով նոր կազմակերպութիւն մը ըլլայ, Ազգային դործերը կարենան տեսնուիլ։ Այս մասին ալ կը դիմենք դարձեալ Վսեմ. Պօղոս բաշայի և միանդամայն ներկայ Թաղ. Խորհրդոյ Անդամներէն Բէյիզեան Կարապետ և Արթին Պէյերու, հարցուցնելու համար թէ կարելի՞ է երևակայել որ իրենք յանուն իրենց պատուոյն յայտարարեն թէ՝ Օթէլ Խըտիվեալի մէջ Պօղոս Բաշայի կողմանէ կազմուած ներկայ Թաղ. Խորհուրդը առժամանակեայ հանդամանքով չէր կազմուած։

Արդ, որովհետև վերոյիշեալ անձնաւորութիւններէն այդ տեսակ յայտարարութեան մը կարելիութիւնը ենթադրելն անդամ՝ անոնց ուղղամտութեան դէմ բացարձակ սրբապղծութիւն կը նկատենք, ուրեմն կատարելապէս հաստատուած կը մնայ թէ.

1. 1899 Ապրիլի ընտրութիւնները ապօրէն էին և անվաւեր մնացած պէտք է նկատուին.

2. Ինչ որ ալ եղած ըլլար 1899 Ապրիլի ընտրութիւններէն բղխած Թաղ. Խորհրդոյ կազմութեան օրինաւորութիւնը, սա ճշմարտութիւնը անհերքելի է թէ՝ այդ Թաղ. Խորհուրդը նոյն տարուան Դեկտեմբերին իւր ամբողջութեամբը հրաժարելով լուծուեցաւ։

3. Ներկայ Թաղ. Խորհուրդը ոչ միայն օրինաւորապէս ժողովուրդին քուէովը ընտրուած Թաղ. Խորհուրդ մը չէ, այլ մինչև անդամ 1899 Ապրիլի ապօրէն Թաղ. Խորհրդոյ շարունակութիւնն ալ չէ, հապա պարզապէս առժամեայ հոգաբարձութիւն մ՝է. հետևաբար յօդուածագրին զանի իբրեւ օրինաւոր Թաղ. Խորհուրդ մը ներկայացնելու համար ըրած ջանքերը՝ պարզապէս արևին լոյսը չի տեսնելով ցերեկ ատեն կէս գիշեր է ըսելու չափ կուրութիւն մ՝են, եթէ երբէք իւր ըսածներն անգիտակցաբար ըսած է։

Ինչպէս որ անմիտ բարեկամ մը խելացի թշնամիէ մը աւելի վնաս կրնայ հասցնել, անանկ ալ ծառաներ կան որոնք այնքան վարժուած են պնակալիզութեան որ շատ անդամ այդ ախտը մինչև ծայրայեղութեան կը մղէ զիրենք, որով երբեմն par excès de zèle կը յանդգնին իրենց տերերուն իրական արժանիքը նսեմացնելու հանդամանք ունեցող ձեռնարկներու մէջ նետուիլ։ Թաղ. Խորհրդոյ դրագրին վերոյիշեալ յօդուածն ալ այդ ձախաւեր ձեռնարկներուն կարգը կրնայ դասուիլ, միայն թէ՝ այդ պարոնը լեղուագարութեան ախտէն ալ բռնուած ըլլալը քանիցս հաստատելէ վերջը իւր վերոյիշեալ յօդուածին մէջ՝ ալ ա՛յն աստիճան չափն ու սահմանը անցուցած է որ, այլ եւս կարելի չէ լոկ արհամարհական լռութեամբ մը բաւականանալ, ինչպէս ըրինք մինչև ցարդ։

Թաղ. Խորհրդոյ դրագիրը իւր յիշեալ յօդուածին մէջ կը յանդգնի հրապարակաւ յայտարարել թէ՝ բոլոր այն ազգայիները որոնք համոզումն ունին թէ՝ Աղէքսանդրիոյ մէջ Սահմանադրութիւնը բռնաբարուած է, և կը փափաքին որ ազգային դործերը օրինաւոր կերպիւ կատարուին, ժողովուրդը խաբող, դրդռող և պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողներ, այսինքն

աւելի բացորոշ կերպով ըսելով, խաբեբաներ, խռովարարներ եւ ազգին վնասներէն օգտուող անբարեխիղճ կեղծաւորներ են։ Արդ, թէեւ Աղեքսանդրիոյ ազգային գործերուն կարգ ու կանոնով և օրինաւորութեան սահմանին մէջ կատարուիլը պահանջողները ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը կը կազմեն, սակայն խնդիրը քիչ կամ շատ վրայ չ'ելլալուն համար, և մանաւանդ ա՛ և է խծբծանքի տեղի չի տալու համար, կը բաւէ միայն ըսել թէ՝ այդ օրինաւորութիւնը պահանջելու նպատակաւ վերջին անգամ Առաջնորդ Սրբազանին հանրագրութիւն մը մատուցուեցաւ, որոյ պարունակած 210 ստորագրութիւններէն մէկն ալ իմս է. ուստի ներկայիս կուգամ բացարձակապէս պահանջել Թաղ. Խորհրդոյ գրագրէն որ, առանց ա՛ և է խծբծանքի, բացարձակապէս և հրապարակաւ եւ առնէ ոչ միայն այդ նախատական խօսքերը, այլ իւր վերոյիշեալ յօդուածին մէջ իբրև ճշմարտութիւն ներկայացուցած իրողութեանց անճիշդ կամ սխալ ըլլալը խոստովանի։

Նաև կը խնդրեմ և ի հարկին կը պահանջեմ Թաղ. Խորհուրդէն որ պաշտօնապէս յայտարարէ եւ հաստատէ թէ՝ իւր գրագրին այդ յօդուածը՝ իւրեն հովանաւորութեանը (Patronage) ներքև չէր գրուած եւ թէ ինքը ոչ միայն այդ յօդուածին և անոր պարունակած նախատական խօսքերուն մասին ամենափոքր կերպիւ հաներաշխութիւն (Solidarité) չէ ունեցած և չուզեր ունենալ իւր գրագրին հետ, այլ բացարձակապէս կը ժխտէ (Désavouer) անոր պարունակութիւնք եւ չի կրնար ներել որ ազգին հայրովը ապրող պաշտօնեայ մը յանդգնի ժողովուրդին գոնէ մէկ մասին դէմ հրապարակաւ նախատինք տեղալու եւ, այն ալ իւր պաշտօնին վերարկուին տակ։

Պէտք եղած ապահովութիւնը ստացած եմ համոզուելու համար որ, ինչպէս ուրիշ քաղաքակրթեալ երկիրներու մէջ, անանկ ալ Եգիպտոսի մէջ՝ բարձրաստիճան պաշտօնատարէն մինչև ամենայեսին անհատին բնաւ ներելի չէ որ հասարակութեան մը մէկ մասին կամ անհատի մը դէմ, հրապարակաւ նախատական խօսքեր ուղղէ, ուստի այժմէն կը յայտարարեմ թէ՝ բացարձակապէս որոշած և օրինական ամենամիջոցներով պրբել տալ այդ նախատինքը, եթէ կատարեալ գոհացում չի տրուի այդ մասին. իսկ այդ գոհացումի կերպն ու միջոցները որոշելու համար ալ կարծեմ թէ ներկայ դրութեանս հրատարակուելէն մինչև 30 օր կը բաւէ։

Ի վերջոյ կը խնդրեմ նաև Սրբազան Առաջնորդէն որ հաճի իմացուցել մեզ թէ ինքը արտօնած է Թաղ. Խորհրդոյ գրագիրը որ յանուն իւր Սրբազնութեան յայտարարէ թէ՝ օրինաց դրծադրութիւնը խնդրելու և նոյն իսկ ընթացք պահանջելու համար իրեն ներկայացուած հանրագիրն ստորագրող 210 ազգայինները իբրև խաբեբայ կը ճանչնայ եւ թէ իրօք այդպէս կը ճանչնայ Նորին Սրբազնութիւնը։

ՄԻՀՐԱՆ ԴԱԼՓԱՆԵԱՆ

Աղեքսանդրիա 10|8|901

# ԱՆՀՐԱԺԵՇՏԸ

(Շար. ԺԱ. թիւեն վերջ)

Թողո՛ւնք որ մեր երանելի Եգիպտոսի ազգ. տարեգրութեանց մէջ նախընթացը չը տեսնուած, դեռ կենդանի անձի մը շիմ կենդանագրովը կենսագրութիւնն ընդօրինակուի փայլուն ներկուած թերթի մը վրայ, որ արշալոյսը պիտի բերէր անապատի բընակիչներուն ու Փարաւոնի նկուղները նստողներուն . . . . .

Թողո՛ւնք որ մեր Աղեքսանդրիոյ շիտզոր վարչութիւնը զօրաւոր ձեռքերով վարէ մեր ճակատագիրը, քալէցընէ իւր միահեծան տիրապետութիւնը, ուժին ուժովն ու Օրէնքին արհա-

մարհանքովը, հոգ չէ՛ թէ եղանակնե-
րուն հետ փոփոխուին վարժարանին
պաշտօնեաները, մնացականները դուրս.
հայ մանկտիին դաստիարակութիւնը
վստահուի օտար հսկողի մը, որ համայ-
նագէտ, հսկողութիւնը միայն չէ սով-
րած։

Թողո՛ւնք որ մեր հասարակու-
թեան կարևոր մէկ մասը նոր հանրա-
գրրութիւն մը ներկայելով Սրբազան
Առաջնորդին, ազգ. Օրէնքին—որ կը
հեծէ շղթայակապ—անյապաղ արձա-
կումն ու անոր իշխանութեան կէտ
առ կէտ գործադրութիւնը պահանջէ
վարչութեան միակ Պետէն, Առաջնոր-
դէն, որ ա՛յդ հանգամանքով միայն
ղրկուած է Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիար-
քարանէն։

Թողո՛ւնք որ կարգ մը յետսա-
միտներու խիթ առթեն այս տողերու
մէջ յայտնուած ճշմարտութիւնները,
ոմանց ալ առիթ ընծայեն իրենց խո-
ռոչ բերանները բանալու և լուտանք-
ներ պոռթկալու անկեղծ գործիչնե-
րու դէմ, որոնք ժողովրդին դերա-
գոյն իրաւունքներն ու շահերը պաշտ-
պանելու և անոնց օգտակարապէս
ծառայելու համար կ՚արհամարհեն ա-
մեն խոչնդոտ ու ամեն սպառնալիք։

Թողո՛ւնք, վերջապէս, որ մեռելնե-
ները թաղեն իրենց մեռելները։

Թողո՛ւնք, ա՛յո, այս ամենը, ու
պէ՛տք է թողունք մանաւանդ հիմայ
որ, անհրաժե՛շտը, գոյի ու չգոյի հա-
նելուկը՝ մեր աչքին առջև ցցուած
կեցած է. ամեն ներշնչում, ամեն
բանաստեղծութիւն, ամեն իմաստասի-
րութիւն պէ՛տք է լռեն երբ կը խօ-
սի անհրաժեշտը, որուն գոհացում
տրուելու հարկը կը չեշտուի աւելի
քան երբէք։

Այս անհրաժեշտն է՝ Արտասահ-
մանի Հայոց Գոյութեան հարցը, որ,
այսօր, իր քստմնեցնող ներկայութի-
թիւնը կուգայ մեզի աղդարարել։

Այս հարցը շատ հին չէ. արիւ-
նոտ յառաջաբաններուն աղէտալի վեր-
ջաբանն է անի. թէ ինչպէս։

Հայրենիքին մէջ երբ մարդ ապ-
րելու ա՛լ անկարելիութիւնը, ու թե-
րևս մօտալուտ Մեծ-Աղէտքին մըղ-
ձաւանջը, միանալով մղեցին դաւա-
ռացի Հայերուն մէկ մասը խմբովին
կամ զատ զատ դաղթելու Ռուսիա,
Ամերիկա, և այլուր. յետոյ, երբ
բարբարոսութիւնն սկսաւ ա՛լ աւելի
անպատիժ գործել, յեղափոխութեան
երկունքը բռնեց ու, կացութիւնը պո-
ռաց. ընդվզո՛ւմ. ասկից՝ բանտերը,
աքսորները, կախաղանները, մասնակի
մահացումները, մեծ ու պզտիկ ջար-
դերը, Սասնոյ... յետոյ բոլոր Հա-
յաստանի, վերջապէս Զեթունի վեր-
ջին ցնցումն ու Կ. Պոլսոյ վերջին
անմոռանալի ջարդը, ահա՛ շարժա-
ռիթները դաղթականութեան, որ տա-
կաւ աճելով, այսօր կը կազմէ պատ-
կառելի քանակ մը, և որ ցրուած է
երկրագնդիս հինգ մասերուն վրայ։
Եգիպտոս, Սուտան, Եթովպիա, Սո-
մալիներու Ֆրանս՝ ծովափունքը, Ճի-
պուտի, Ալճէրի, Թունուզ, Տրիպոլիս,
ու ափրիկեան ուրիշ քիչ ծանօթ եր-
կիրները. Աֆղանիստան, Հնդկաստան,
Չին, Ովկիանիոյ քանի մը կղզիները,
Ամերիկայի Միաց. Նահանգները, Ար-
ժանդինի հանրապետութիւնը, ևն, Եւ-
րոպայի բոլոր կարևոր կեդրոնները,
Պուլկարիա, Ռումանիա, Աւստրիա,
Ֆրանսա, Անդլիա, Զուիցերիա, ևն.
ահա՛ դլխաւոր դաղթավայրերը, ուր
դիմած է ու հաստատուած՝ Արտա-
սահմանի հայութիւնը։

Թէ այս դաղութներէն ո՞րը դը-
տած է յաջողութիւն, ո՞րը թշուա-
ռացած կամ անհետացած. ո՞ր դաղ-
թավայրերն աւելի հաշտ դետին մը
ընծայեցին մեր դաղթականութեան
կամ կրնան ընծայել. դաղթականնե-
րըն ի՞նչպէս պիտի կրնան հաշտուիլ
միջավայրին հետ ուր կապրին. Ար-
տասահմանի Հայութեան տիրական
դաղափարն ի՞նչ պէտք է ըլլայ. ա-
հա՛ հարցումներն, որոնց ամբողջովին
պատասխանելու համար կը պակսի մե-
զի հարկաւոր պաշարը։ Միայն Եգիպ-

տոսի, Սուտանի, Ճիպուտիի և Եթովպիոյ հայ դաղթականութեան վրայ կը յուսանք տալ բաւարար տեղեկութիւններ, որոնցմէ թերևս օգտուին ամեն անոնք որ կ'ուզեն կամ ըստիպուած են հաստատուիլ այս երկիրներուն մէջ։

Գալով միւս դաղթավայրերուն, պիտի խնդրէինք մեր պատուական ընթերցողներէն, որոնք ցրուած են այդ հեռաւոր անկիւններն ու կեդրոնները, պարբերաբար թղթակցութեամբ հասցընել խմբագրութեանս իրենց ասպնջական երկրին մէջ հայութեան դրաւած դիրքին, տնտեսական, մտաւորական ու բարոյական կացութեան ճշդիւտ պատկերը. այս եղանակաւ միայն պիտի կրնանք ընդհանուր Արտասահմանի Հայութեան վրայ բոլոր անալ փափագուած տեղեկութիւնները։ Իսկ եթէ թղթակցութիւնը քիչ մը դժուար համարուի դէթ, իւրաքանչիւր դաղթավայրի մէջ երևցող հայաթերթին կամ Հանդիսին մէջ հրատարակուին այդ շահեկան ու օգտակար տեղեկութիւնները։

---

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

### ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆԻ

### Տէր Խմբագիր.՝.՝.՝.

Ակէ քանի մ' օր առաջ, իբրև աղդարար պատասխան Աղնիւ Օր. Մարի Պէյլէրեանի «Միաչի մը առրիւ» յօդուածին (որը հրատարակուած էր ՓԻՒՆԻԿ աղգօգուտ շաբաթաթերթի մէջ,) Արշալոյսի 198 համարում պատահեցի քանի մը անուանարկիչ բառերի, զորս Եղիշէ Թորոսեան մը կը բերնար յերիւրել և անամօթաբար հրապարակ նետել, առանց սակայն խղճի ամենաթեթև խայթ մը զգալու։

Պրն. Խմբագիր.՝.՝.՝. ձեր այդ պատասխանի մէջ ի միջի այլոց դիս ապերախտ կ'անուանէք, առանց բացատրելու. թէ ի՞նչ բանում կը կայանայ իմ ապերախտութիւնս ձեզ վերաբերմամբ, քանի որ զձեզ ճանչնալու տխուր օրէն մինչև հեռանալս հազիւ մէկ ամիս տևեց, և այդքան կարճ ժամանակամիջոցում՝ յարաբերական ո՛չ մի առնչութիւն չունենալով ձեզ հետ, բնականաբար ապերախտ լինելու տրրամադրութիւն ալ չէի կարող ունենալ։

Արդարև չէր արժեր ձեզ հետ նրժար մտնել, բայց որպէս զի հասկնաք թէ ի՞նչ կը նշանակէ ուրիշի մը պատուոյն հետ խաղալը, պարտք կը համարիմ հրապարակական ակնարկ մը նետել մեր միամտեայ յարաբերութիւնների վրայ, որը թերևս ինքնաճանաչութեան մղէ ձեզ, և դուք երկրորդանգամ չ'համարձակիք Տիրացուական սահմանն անցնելով ձեռք մեկնելու այն բարձրութեան, որին արժանապատուութիւն կ'անուանեն։

Պրն. Խմբագիր.՝.՝.՝. կարծեմ դուք ալ կը խոստովանիք թէ, ես ձեզ միայն այն օրը ճանչցայ (արտաքինով) երբ Պ. Աւետիս Նադշճեանի (Ավ) հրաւէրով եկայ «Վերջալոյսի Ձայները» շարելու, անուրանալի է թէ առաջին հանդիպումին դուք զիս ընդունեցիք մարդավայել քաղաքավարութեամբ, սակայն այդ բոլորը կարծես քանի մը օրուայ համար նախասահմանուած լիներ, որովհետև երբ ըմբռնեցիք թէ ես ինքնուրոյն մէկն եմ, և առաջիկայինն չ'պիտի ենթարկուիմ ձեր խընամուած ու սրբադրուած մեքենայութիւններին, անմիջապէս աւելի նուրբ դիմակ մը հագաք (որպիսին ընդհանրապէս կը հագնիք ի փառս մամոնայի) և սկսեցիք կեղծիքը կեղծել առլիթէն օգտուելու համար, Արշալոյսի ծանրութիւնը իեռ վրայ նետելով, բայց այդ բաւական չէր ձեզ համար, ուստի հետզհետէ կեղծիքը կերպարանափոխեցիք սանձարձակ պահանջի, և որպէս պարտաւորութիւն զիս ծառայեցուցիք ձեր խաբեութեան օրկանին (Արշալոյսին։) Տէր Խմբագիր, (sic.!!!) ես այդ բոլորը կը հոսկնայի, կ'զգայի յանիրաւ շահագործուիլս, բայց կը լռէի, որովհետև շատ շուտ հաշտուել էի այն

մաքի հետ թէ, ես չէ թէ ծանօթի կամ բարեկամի մը տանը՝, այլ ամենահասարակ պանդոկապետի մը մօտ կ'ապրիմ, որը հակառակ ընդունուած կանոնին 24 ժամը երկու օր հաշուելու պայմանով կը պահանջէ տան վարձը իր վարձակալէն, սակայն այս ընթացքնիդ յարատև չէր կարող լինել, որովհետև վերջապէս լրացաւ Վերջալոյսի Ձայները ի մեծ մտահոգութիւն ձեր, հո՛գ մը, որ ոչչափ ալ մաշեցնող, սակայն խնամքով թաղցուցիք ձեր սրտի խորը, ու անգամ մը ևս հաղաք ձեր տիրացուական շալիկը, և երբ ես կը պատրաստուէի իսպառ հեռանալ ձեր մօտէն, համաշձակեցաք դրամական այժով ձգել դիս ձեր Խեղդարանը, համէստ առճիկով մը Արշալոյսի շարելը առաջարկելով, այդ պահուն յոյս մը կ'ապրեցնէր ձեզ, և դուք դեռևս կը հաւատայիք թէ պիտի դիջանիմ ձեր Կոկորդիլոսի արցունքներին, իսկ երբ վերջին մերժումը լսեցիք ինձմէ, այլևս բոլորովին մէկդի նետեցիք ձեր դիմակը, և սկսեցիք ալ ու ձախ ձեր ամբաստանութիւնները, ճիշտ այնպէս՝ որպիսին ստէպ կը դրծադրէիք ձեր հարազատների նկատմամբ։

Ահա իմ ապերախտութեանս ամբողջ դաղտնիքը, որի մասին աւելորդ կը համարիմ այլևս առաջ գնալ, նկատի առնելով որ, որչափ երկար խօսիմ, այնքան աւելի կարևորութիւն տուած պիտի լինիմ Տիրացուիմը, որը օգտուելով տեղական հանդամանքներէն, և ժողովրդի թո՛յլ ինքնագիտակցութենէն, համարձակելէ բացարձակապէս գողնալ Խմբագրական կոչումը, կոչում մը, որ ո՛չ մի տեսակէտով չի համապատասխաներ. տարիների ընթացքում քահանաներու քղանցքների տակէն « Խորհուրդ մեծ և սքանչելի » ներբողող փտած ու ոչնչացած զանդուածի մը հետ։

ԿԱՐԱՊԵՏ ԱՑՎԱԶԵԱՆ

1901 8|10 Աղէքսանդրիա


# ԴԵՂԱՐԱՆ
# ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Ոչն միաձայն հատուտուիթիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղօրայք, սբեսիալիրիներ եւ հանքային թարմ ջուրեր։

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին։

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վիկայեալ ու փորձ մանկաբարձներ։

---

## ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երևելի հայ տուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն։

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին։

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը։

---

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, տոկուն ու ձեւաւոր. կը մրցի բոլոր օտար վաճառատանց հետ, գիներուն ժամանութեան կողմէն։


Տպագր. Հայկ. Տպ. «ԱՐԱՐՍ»ի Աղեքսանդրիա Le Gérant, J. Munier